ԿԱՐԾԻՔ

Հովհաննես Գեորգու Խորիկյանի՝ «Աքեմենյան Պարսկաստանի վարչական բաժանումը» վերտառությամբ Է.00.02-«Համաշխարհային պատմություն, միջազգային հարաբերություններ» մասնագիտությամբ պատմական գիտությունների դոկտորի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված ատենախոսության վերաբերյալ

Աքեմենյան Պարսկաստանի վարչական բաժանման խնդիրն առաջին ուսումնասիրող Հերոդոտոսից 2500 տարի հետո էլ շարունակում է մնալ հետազոտողների ուշադրության կենտրոնում: Խնդիրը վերաբերում է և՛ յուրաքանչյուր սատրապության տարածքի ու սահմանների, և՛ դրանց ձևավորման համապետական ու տեղական առանձնահատկությունների, և՛ դրանցում ապրող տարբեր ժողովուրդների ու ցեղերի էթնիկական պատկանելության քննությանը: Ահա այս հարցերին է անդրադարձել Հովհաննես Խորիկյանը՝ ներածությունում հստակորեն ձևակերպելով աշխատանքի նպատակն ու խնդիրները:

Ի սկզբանե նշենք, որ կատարվել է հսկայածավալ աշխատանք. ատենախոսը համարձակորեն մտել է այս գերծանր բնագավառը և ներկայացրել լուրջ գիտական հետազոտություն: Ատենախոսությունում արծարծվող հարցերն այնքանով են բարդ, որ դրանք բուռն քննարկումների առարկա են եղել տասնամյակներ շարունակ, իսկ նոր հարցեր էլ գիտական շրջանառության մեջ են դրվում հենց հեղինակի կողմից:

Հ. Խորիկյանի՝ 5 գլուխներից կազմված դոկտորական ատենախոսությունն ունի կուռ ու տրամաբանված կառուցվածք, որոնցից յուրաքանչյուրում ներկայացվում է հեղինակի մանրակրկիտ քննությունը բոլոր 21 սատրապությունների ընդգրկած տարածքի, սահմանների, դրանցում բնակվող էթնոսների տեղորոշման ու նույնականացման, Աքեմենյան տերության վարչական ձևավորման սկզբունքի և այլ հարցերի վերաբերյալ: Հարկ է նշել, որ բոլոր գլուխները շարադրված են գիտական պատշաճ մակարդակով, ինչը հաստատում է ատենախոսի հետազոտական լուրջ ունակությունների, աշխատասիրության և ճիշտ ընտրված մեթոդաբանության մասին: Այս ամենը թույլ է տալիս ասել, որ աշխատությունը գրեթե զերծ է ավելորդաբանություններից և անհարկի կրկնություններից, ինչը սովորաբար հատուկ է նմանատիպ հետազոտություններին:

Կարևոր է ընդգծել, որ Աքեմենյան Պարսկաստանի վարչական բաժանման ուսումնասիրության համար աղբյուրագիտական նյութը մասնագետների համար հիմնականում շարունակում են մնալ հունալատինական աղբյուրները, սակայն ի պատիվ ատենախոսության հեղինակի, վերջինս և՛ հունալատինական, և՛ սեպագիր, անհրաժեշտության դեպքում նաև հնագիտական ու մյուս աղբյուրները կարողացել է հմտորեն համադրել, վերլուծել և ուշագրավ եզրահանգումներ կատարել: Սա

նշանակում է, որ սկզբնաղբյուրների քննությունը հիմնականում կատարվել է նոր լույսով՝ միաժամանակ հաշվի առնելով բնագավառի կարևոր գիտական ձեռքբերումները:

Ստորև ներկայացնենք գլուխների համառոտ բովանդակությունը:

Առաջին գլխում հեղինակը մանրամասնությամբ քննում է Փոքր Ասիայի մեջ մտնող I, II, III, IV սատրապությունների ընդգրկած տարածքի և սահմանների հարցերը՝ վերհանելով նաև այդ սատրապությունների բնակչության՝ հոնիացիների, կարիացիների, լյուկիացիների, մագնեսյանների, էոլիացիների, միլյուացիների, պամփյուլիացիների, լյուդիացիների, փռյուգիացիների, կիլիկեցիների և մյուս ժողովուրդների տեղորոշման և էթնիկական պատկանելության խնդիրները:

Երկրորդ գլխում հեղինակը սկզբնաղբյուրների մանրակրկիտ քննությամբ ներկայացնում է Եգիպտոսի, Սիրիայի, Արաբիայի, Պաղեստինի, Փյունիկիայի վարչական կացության հետ կապված տարաբնույթ հարցերը: Օրինակ, հեղինակը, քննելով եգիպտական սատրապության սահմանների հարցը, իրավացիորեն ցույց է տալիս, որ Եգիպտոսը՝ որպես վարչական միավոր, չի տարածվել Սիրիա-Պաղեստինում: Հետաքրքիր և կարևոր է, որ հեղինակը ներկայացնում է նաև տվյալ սատրապության ենթաշրջանների, այդ ենթաշրջանների մեջ մտնող ավելի փոքր վարչական միավորների տարածքը. օրինակ, Պաղեստինի վարչաքաղաքական մասեր հանդիսացող Հուդան, Սամարիան, Ամմոնը, Դորան և այլն:

Երրորդ գլխում կատարված աշխատանքը աղբյուրագիտական նյութի և մասնագիտական գրականության օգտագործման առումով շատ ծավալուն է և վերաբերում է Աքեմենյան տիրապետության շրջանում Առաջավոր Ասիայի սատրապական բաժանման քարտեզին: Հեղինակը բոլոր ենթագլուխներում կարողացել է կատարել ուշադրության արժանի հետևություններ, ընդ որում՝ մշտապես բացահայտելով իր գիտական խոհանոցը: Այս առումով իր եզրակացությունները համոզիչ դարձնելու համար հեղինակը կատարում է տարաժամանակյա և համաժամանակյա քննություն՝ որոշակի հարցեր պարզաբանելով նախաաքեմենյան և հետաքեմենյան կտրվածքով: Օրինակ, կարևոր են հեղինակի տեսակետներն Ապոլոդորոսի, հայկական սատրապության վարչական կացության ու կենտրոնի, սասպեյրների, մարական և այլ ցեղերի տեղորոշման մասին:

Չորրորդ գլխում հեղինակը նույն մանրակրկիտ հետևողականությամբ քննում է միջինասիական, հնդկական սատրապությունների սահմանների և դրանց բնակչության տարաբնակեցման և էթնիկական նույնականացման հարցերը: Կարևոր են կասպերի և սակ-սկյութների տեղադրության ու այդ ցեղերի ծագման հարցերի նորովի մեկնաբանությունները, քանի որ այս հարցերը մշտապես կեղծվում են նույն ադրբեջանական պատմագիտության կողմից: Կասպերի հարցը քննելիս հեղինակն առաջին անգամ հայրենական պատմագիտության մեջ խոսում է Ելեփանտինե կղզուց

հայտնաբերված արամեական փաստաթղթերում այդ ցեղի հիշատակության մասին:

Հինգերորդ գլխում հեղինակն իրավացիորեն վերջում է ներկայացնում Աքեմենյան Պարսկաստանում սատրապությունների ձևավորման սկզբունքը, քանի որ նախորդ գլուխներում արդեն կատարված քննությունը թույլ կտար հստակ եզրակացություն կատարել այս հարցի շուրջ և հեղինակի հիմնավորումը՝ սատրապությունների ձևավորման հիմքում ընկած է եղել ժամանակագրական գործոնը բավականին համոզիչ է: Այս գլխում քննարկվող էթնիկական վերաբնակեցումների, Սկուդրա սատրապության, Ակաուֆաչիյա երկրի, կարանոս կոչված պաշտոնի վերաբերյալ հարցերը ևս հետաքրքիր ու ուշագրավ են:

Եզրակացության մեջ հանրագումարի են բերված աշխատանքի հիմնական արդյունքերը:

Ինչպես տեսնում ենք, կատարված աշխատանքն իրոք հսկայածավալ է, և վաղուց հասունացել էր անհրաժեշտությունը մեկ ծավալուն ուսումնասիրությամբ տարատեսակ սկզբնաղբյուրների բոլոր տեղեկությունները և ուսումնասիրողների հայտնած կարծիքները քննարկելու ու փաստերի իրական պատկերը վերականգնելու: Ներկայացված աշխատանքը գալիս է լրացնելու այդ բացը:

Աշխատանքը զերծ չէ բացթողումներից ու թերություններից, և այն հետագայում ավելի անթերի տեսնելու ցանկությամբ (հատկապես, եթե այն դառնալու է մենագրություն) կցանկանայի հեղինակի ուշադրությունը հրավիրել մի քանի բացթողումների վրա:

1. Սասպեյրներ-ասպեյրների մասին խոսելիս հեղինակը էջ 202-ի հղում 1255-ում ներկայացնում է հնարավոր մի վարկած, որ այդ ցեղի անունը ծագում է իրան. aspabāra-, հին պարսկ. asabāra-«հեծյալ» բառից: Այս տեսակետը հեղինակը կարող էր քննարկման առարկա դարձնել բուն տեքստում, քանի որ վարկածն իրոք կարևոր է:
2. XVIII սատրապության սասպեյրների մասին խոսելիս հեղինակը, չնայած իր 2014 թվականի մենագրության (Հայաստանը և Այսրկովկասը Աքեմենյան Պարսկաստանի վարչական բաժանումներում) մեջ խոսել է ալարոդների մասին, կարող էր նոր լրացուցիչ քննությամբ անդրադառնալ այդ հարցին, հատկապես որ ալարոդների տեղորոշումը Կուր գետի ձախափնյակում չի բացառվում:
3. Ակաուֆակա կամ Ակաուֆաչիյա երկրանվան՝ հեղինակի ստուգաբանությունը «ոչ լեռնցիներ, դաշտաբնակներ» վիճելի է, բայց տեղադրությունը Կուր գետի և Կովկասյան լեռնաշղթայի միջև հավանական է:
4. Հեղինակը քարտեզով կարող էր ներկայացնել Աքեմենյան տերության վարչական բաժանումը:
5. Բովանդակության մեջ հեղինակը բաց է թողել 1-ին գլխի 1.8. ենթագլուխը:

Նշված թերությունները, սակայն, չեն նսեմացնում աշխատանքի արժեքը: Կատարված է մեծածավալ աշխատանք, որը գրված է գրագետ հայերենով: Հեղինակը ցուցաբերել է ակնհայտ հետազոտական ունակություններ: Ուստի կարծում եմ, որ Հովհաննես Խորիկյանի՝ «Աքեմենյան Պարսկաստանի վարչական բաժանումը» դոկտորական ատենախոսությունը պատրաստ է ներկայացվելու հրապարակային պաշտպանության, ամբողջությամբ բավարարում է ԲՈԿ-ի կողմից ներկայացված պահանջներին, իսկ նրա հեղինակն արժանի է իր հայցած Է.00.02- «Համաշխարհային պատմություն, միջազգային հարաբերություններ» մասնագիտությամբ պատմական գիտությունների դոկտորի գիտական աստիճանին:

Պատմական գիտությունների դոկտոր Էդուարդ Խուրշուդյան

Պատմական գիտությունների դոկտոր Էդուարդ Խուրշուդյանի ստորագրությունը հաստատում եմ:

Муканова Карлыгаш Д.

Казахстан Республикасы, Алматы қаласы / Республика Казахстан, город Алматы
Медеуский район
МУКАНОВА
КАРЛЫГАШ
ДИМКАЕВНА
ЖКЛИП
ИИН: 640703450017

29.10.2020
Ալմաթի